ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0026, ք.Երևան, Գ.Նժդեհի 23, www.court.am
հեռ. 010-48-49-07 / 200 /

N⁰ ԴԴԱ-5 –45856/22
<<21>> դեկտեմբերի 2022թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան,

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ վարչական դատարանի 2022 թվականի էլեկտրաէներգիայի ծառայությունների մատուցման թիվ 882535 պայմանագրի գումարը նվազեցվել է 1000000 դրամով և կազմում է 7617500 ՀՀ դրամ, իսկ Փոստային ծառայությունների մատուցման թիվ PDU-132-03-22 պայմանագրի գումարը ավելացվել է 1500000 դրամով և կազմում է 50519600 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը տալ դրական եզրակացություն:

Հարգանքով՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ***Ն. ԲԱԴԱԼՅԱՆ***

Լրացուցիչ համաձայնագիր թիվ 1

09.03.2022թ.-ին կնքված թիվ PDU-132-03-22
Փոստային կապի ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան **20.12.2022 թ.**

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0002, Սարյան 22 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կոմերցիոն տնօրեն Ցոլակ Հովհաննեսյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ Լիազորություններ վերապահելու մասին 19.02.2021թ.-ի թիվ 418-Ա հրամանով, և ՀՀ վարչական դատարանը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Լևոն Արտաշեսյանի, մյուս կողմից, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) պայմանագիրը հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 09.03.2022թ.-ին կնքված թիվ PDU-132-03-22 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 49 019 600 (քառասունինը միլիոն տասնինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 50 519 600 (հիսուն միլիոն հինգ հարյուր տասնինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք. Երևան, 0002, Սարյան 22
ՀՎՀՀ՝ 02507464
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 1930003703156000
Հեռ.՝ (010) 514-548

Կոմերցիոն տնօրեն՝
Ցոլակ Հովհաննեսյան
/ստորագրություն/

Պատվիրատու՝

ՀՀ վարչական դատարան
ք. Երևան, Գ. Նժդեհի 23
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900021000162
Հեռ.՝ (010) 447-174

Աշխատակազմի ղեկավար՝
Լևոն Արտաշեսյան
/ստորագրություն/